600.0595.21.12.11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

21 դեկտեմբերի 2011 թվականի №595Ա
քաղ. Երևան

«ՀԱՅՌՈՒՍԳԱԶԱՐԴ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2012-2014 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի ժդ) կետը և 28-րդ հոդվածի 1-ին կետի ը) ենթակետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության 2012-2014 թվականների ներդրումային ծրագրին՝ 11 940,6 մլն դրամ ծավալով՝ առանց ավելացված արժեքի հարկի, հետևյալ հիմնական ուղղություններով.
   1) գազափոխադրման համակարգի Աբովյանի գազի ստորգետնյա պահեստարան-կայանի վերակառուցում և ընդլայնում. 2012-2014 թվականների ընթացքում՝ 1 050,8 մլն դրամ, որից 2012 թվականին՝ 354,8 մլն դրամ (հավելված №1),
   2) գազափոխադրման համակարգի վերակառուցում. 2012-2014 թվականների ընթացքում՝ 2 151,3 մլն դրամ, որից 2012 թվականին՝ 569,9 մլն դրամ (հավելված №2),
   3) գազափոխադրման համակարգում այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ. 2012-2014 թվականների ընթացքում՝ 1 326,0 մլն դրամ, որից 2012 թվականին՝ 141,8 մլն դրամ (հավելված №3),
   4) նոր բաժանորդների միացում. 2012-2014 թվականների ընթացքում՝ 490,0 մլն դրամ, որից 2012 թվականին՝ 200,0 մլն դրամ (հավելված №4),

5) գազաբաշխման համակարգի վերակառուցում. 2012-2014 թվականների ընթացքում՝ 3 578,3 մլն դրամ, որից 2012 թվականին՝ 912,2 մլն դրամ (հավելված №5),

6) գազաբաշխման համակարգում այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ. 2012-2014 թվականների ընթացքում՝ 3 344,2 մլն դրամ, որից 2012 թվականին՝ 1 070,1 մլն դրամ (հավելված №6):

2. «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերությանը՝ մինչև 2012 թվականի հոկտեմբերի 15-ը Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացնել «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության 2013-2015 թվականների ներդրումային ծրագիրը:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայություն-ները կարգավորող հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 16-ի «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության 2011 թվականի ներդրումային ծրագրին համաձայնություն տալու մասին» №298Ա որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք.Երևան
21 դեկտեմբերի 2011թ.
ժամը 16^{00}